ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԱԿԱՆ ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ՏԵՂԱԿԱԼԻ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Դեկտ. 15-ին թ. 2200. Օրհնութեան թուղթ Կովկասի Հայոց բարեգործական ընկերութեան խորհրդի անունով նորա 30-ամեայ յոբելեանի առթիւ.

— 19-ին թ. 2214. Գրութիւն Տ. Յուսիկ արքեպիսկոպոսի անունով, որով, գրաւոր հրաժարականի համաձայն արձակուեց «Արարատ» ամսագրի խմբագրութիւնից։

— 21-ին թ. 2219. Առաջադրութիւն Երևանի փոխ-թեմակալի անունով ս. Ստեփաննոս վանքի ձեռագրերը, որ գտնւում են Աւետիս Մելիք-Ստեփանեանի մօտ, ստանալ և Մայր Աթոռ ուղարկելու մասին։

— 21-ին թ. 2220. Առաջադրութիւն Ղարաչամբի ս. Ստեփաննոս վանքի վանահօր անունով, որով պատուիրուեց վանքի ձեռագրերն ուղարկել Մայր Աթոռ, մինչև որ Պարսկաստանի խառնակութիւնները կդադարեն։

— 22-ին թ. 2226. Առաջադրութիւն ս. Սինոդի անունով փութով 1912 թ. Մայր Աթոռի և թեմերի նախահաշիւը կազմելու մասին.

— 22-ին թ. 2222. Առաջադրութիւն ճեմարանի տեսչի անունով Սարգիս Ջանումեանի կտակագումարով արժէթղթեր գնելու և Երևանի պետ. բանկի բաժնում ի պահ տալու մասին։

— 29-ին թ. 2235. Գրութիւն Ս. Պետերբուրգի Հայոց եկեղ. խորհրդի անունով էջմիածնի հինգ միաբաններին եկեղեցական տներում բնակարան տալու մասին։